ԴԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՀԿԱՑԻ

Ա.

Արտավազդ Արքեպիսկոպոսի նախընթաց հոդվածը կարևոր նորություն է բերում հայ գրչության և մանրանկարչական արվեստների պատմության համար։ Լևոն Թագավորը յուր Կեռան Թագուհու հետ, գիտեինք որ մեծ հովանավոր է հանդիսացել այդ արվեստների ծաղկման մեջ, գրել և նկարազարդել տալով այնպիսի հոյակապ գործեր, ինչպիսիք Եմ.ի № 2660/105 և № 2563 ավետարաններն են, և Նոր-Նախիջևանի Լուսավորիչ եկեղեցու մի ավետարանը, այժմ Երևան տարված № 87։ Երեքն էլ արտաքո կարգի արժեքավոր իրենց մանրանկարներով և ճոխ զարդագրությամբ, մանավանդ արքայական զույգի և ընտանիքի պատկերներով, իսկ երրորդը Լևոնի պատանեկության։ Բացի սոցանից Կեռան Թագուհին ինքը միայն գրել է տվել մի ավետարան, առաջ սեփականություն Գանձակի Ս. Հովհաննես եկեղեցու[1]։ Գիտենք նաև մի Սաղմոսարանի մասին, որ առաջ սեփականություն էր պրն. Հարեշյանի, նշանավոր՝ Սարգիս Պիծակի ոճի ծագման և հասկացողության համար։

Այժմ Արտավազդ Արքեպիսկոպոսի շնորհիվ հայ թանասիրության մատչելի է դառնում և մի նոր գործ, որ Լևոն Թագավորի ժամագիրքն է, սեփականություն փարիզաբնակ պրն. Լևիի, հատկապես արժեքավոր Թագավորի պատկերով՝ աղոթողի դիրքով։ Գրիչն է Ստեփանոս Վահկացի, որ մեկն է Հովհաննես Արքայեղբոր դպրոցի բազմաթիվ գրիչ և նկարիչ աշակերտներից։

Արտավազդ Սրբազանը կարծում է, որ նկարիչը Թորոս Ռոսլինը պիտի լինի, որ Հռոմկլայի նկարիչ էր, գրած և նկարազարդած Երուսաղեմի վերև հիշած ձեռագիրները և ուրիշ գործեր Կոստանդին Ա. Կաթողիկոսի համար[2], ուրեմն և հայտնի որպես արքայական ընտանիքի նկարիչ։ Բայց ձեռագրի մեջ նկարչի մասին որևէ խոսք չկա, այլ միայն գրչի, և այդպիսի դեպքերում հիմք չկա նկարիչը տարբեր անձն համարելու գրչից, որ ձեռագիրների մեջ շատ հաճախ նույն անձն է լինում։ Հենց Թորոսը և՛ գրիչ էր և՛ նկարիչ, թեև առավելապես նկարիչ։ Ստեփանոս Վահկացին էլ ոչ միայն ընտիր գրիչ էր, ինչպես Արտավազդ Սրբազանի ուղարկած լուսանկարներն են ցույց տալիս, այլև ուրիշ աղբյուրներից գիտենք, ինչպես կպարզվի հետևյալ տողերի մեջ, որ նա և՛ նկարիչ էր և՛ գրիչ։ Հովհաննես Արքայեղբոր դպրոցն իսկ նշանավոր էր յուր մանրանկարիչներով, որոնցից մեկն է և Ստեփանոս Վահկացին։ Հովհաննես Արքայեղբոր դպրոցի կատարած գիրի և գործի մասին հատուկ ուսումնասիրություն կտպվի Հայագիտական Տարեգրքի երրորդ հատորի մեջ, առայժմ մեր խոսքը համառոտում ենք որքան Ստեփանոս Վահկացու անձի և թագավորական խմբանկարի լուսաբանության հետ կապ ունի։

Բ.

Հնագույն տեղեկությունն ունենք Ստեփանոս Վահկացու մասին 1265 թվից, երբ նա Կոստանդին Ավըրցիի գրչությամբ Գործք

1. Այժմ էջմ. № 1804։

2. Տե՛ս մեր «ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ», Գրակ Բ., Նյու-Յորք, 1943։

Առաքելոց և Կաթուղիկյայց յոթ թղթերը նկարազարդել է «Գրիգոր մականուն Պիծակի հետ Հովհաննես Արքայեղբոր ստացմամբ Տիրոջ դյուղի եկեղեցու համար։ Ահա՝ հիշատակարանի այդ հատվածը. «Նաև զձեռաստն աշակերտ իւր զՍտեփ(անոս) Վահկ(ացի) և զԳրիգոր մականուն Պիծակ՝ զնկարուղք ս(ուրբ)ք տառիցս յիշման արժանի համարեսցիք և զգծաւղ սորին զԿոստանդին Աւրդցի»[3]։

Նույն Վահկացին գրել է, հավանորեն և նկարել ՋԺէ=1268 մի կիսատ Աստվածաշունչ Հովհաննես Արքայեղբոր ստացմամբ, որ բերված է Գանձասարից[4]։ Նախապես պոկված էր նաչիկ Վարդապետի ձեռքով Հովհաննես Ավետարանչի պատկերը, որի առաջ ծունկ է չոքել Արքայեղբայրը եպիսկոպոսական զգեստավորությամբ, որ տպել ենք մեր «ԳՐՉՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ Գ. հատորի մեջ, § 104։ Պատկերը գրված է այժմ յուր տեղումն։

Նույն Վահկացին և Կոստանդին Քահանան, որ Կոստանդին Ավրդցին է, գրել են մի ավետարան 1274 թվին։ Հիշատակարանի մեջ նրանք կոչվում են «հմամարուեստս», Եվսեբիոսի և Կարապետոսի խորանի տակ կա հետևյալ հիշատակարանը. «Զատառապեալս ի բարեաց Ստեփանոս Վահկայցի, որ զհամարարաս գրեցի և զԴաւիթ քահանայ զստացող սորա, - յիշեսցիք ի մեզաց թողութիւն։ Ստեփանոս Վահկացին ուրվագծել է միայն խորանները, առանց գունավորելու[5]։

Նույն Կոստանդինն է գրել և մի ոչ լիակատար Աստվածաշունչ, ընտիր մագաղաթ, սքանչելի բոլորգիր, «անարհեստ գրիչ Կոստ(անդին) ծառայ և աշակերտ տ(եառ)ն իմում», այսինքն Հովհաննես Արքայեղբոր ՉԼԳ=1234 թվին, երբ մեռավ Վասակ Ճանճո տեր, «ի մարտի ամսոյ ԺԳ. յաւուր երկշաբաթոյ ընդ էրկաս աւուրն ի մայրաքաղաքն Սիս, և թաղեցաւ ի ս(ուրբ)ը ոսկեան Ավետեր»[6]։

Ոսկեբերանի Ճառք և Մեկնութիւնը, նաև նորա անունով մեզ հասած Լուսավորչի ներբողը մի տուփի (վազմ) մեջ. վերջինը գրված է Ստեփանոս Վահկացու կողմից լավ բոլորգրով։ Ստացողն է «Պարոն Աւշին որդի Պարոն Թաւտարէի»։ Թվական չունի[7]։

Հովհաննես Արքայեղբայրը 1286 թվին ստացել է մի ավետարան և Հանգիստ Յովհաննու Աստուածաբանի և Նվիրել Տիրոջ գյուղին. «Զոր իմ ի ծեր հասակի տկա(յ) գրել զ(սուր)ք աւետարանս ի թվ. ՉԼԵ ի լաւ և լընտիր աւրինակէ. և՝ սորին մերձ զայլ սրբոցն ընթերցմունս ճաշոյ, գրեալ ձեռամբ Ստեփանոս երիցու և պարգևեցի զսա Տիրոջ գեաւղս, և ի յիշատակ մեզ և մերոցն[8]։ Ուրիշ տեղ Ստեփանոսը կոչվում է քահանա։ Ձեռագիրը նկարազարդված է շքեղ մանրանկարներով։

Գրիգոր և Ստեփանոս քահանաները ուղղել են մի ավետարան, գրված 1293 թվին, գրված Գոնների վանքում, Հովհաննես Արքայեղբոր մի ուրիշ աշակերտի ձեռքով Վահրամ անունով[9]։

Ըստ Ալիշանի, գրիչ ոմն հիշում է «զՍտեփանոս Վահկացի, որ հրամանաւ Սոսթենէսի վերակացու լինէր Նորոգութեան Ս. Հոգի եկեղեցոյ Սսոյ, իսկ յայլմէ գրչէ՝ վկայի նա գոլ երկասիրող կամ գրող Արարածոց գրոցս»[10]։ Ժամանակով և այլ հանգամանքներով, որ տեղի սղությամբ չենք կարող պատճառաբանել այստեղ, հարմար է նույնացնել սորան մեր Ստեփանոս Վահկացու հետ։

Այս տեղեկությունների հիման վերա ասել կարող ենք որ Արտավազդ Սրբազանի եզրակացությունը, թե պրն. Լևիի ձեռագրի դրչության վայրը Հռոմկլան է և նկարիչը Թորոս Ռոսլին՝ սխալ է։ Ստեփանոս Վահկացին գործում էր Գոնների մոտ, որ Ակների հետ ենթարկվում էր Հովհաննես Արքայեղբոր։ Գրիչների և նկարիչների հույլ ուներ նա ձեռքի տակ և որոնց գործերից շատերը հասել են մեզ. դրցանից մեկն էր և Ստեփանոս Վահկացին, որի գրիչ և նկարիչ լինելու ապացույցները տեսանք վերև։

Գ.

Ե՞րբ է գրված պրն. Լևիի ձեռագիրը և ո՞վ է թագավորի հետևը կանգնած պալատականը։ Հիշատակարանի ստորին լուսանցքում նոտրագրով ավելացրած նկատողություններ թվականի մասին, հետին ժամանակի գործ է և անհեթեթ. «գրեալ ժամագիրքս յամի Տեառն 1224 և ի թուին Հայոց ՉՃՀԳ։ Ձեռամբ Ստեփանոսի Վահկացւոյ։ Այդ թվականին Հեթումի որդի Լևոն թագավոր չկար, որին Ստեփանոս Վահկացին նկարեր կամ նորա համար աւետարան գրեր։ Լևոնը թագավորել է 1271—1287, ուրեմն և այդ ժամանակների գործ, բայց հավանորեն ավելի առաջին տարիների գործ, երբ նա գրել էր տվել Կեռան թագուհու հետ յուր շքեղազարդ աւետարանը օծման առթիվ, ընտանեկան պատկերով[11]։

3. Ձեռ. էջմ., № 227/196։
4. Ձեռ. էջմ., № 1056/4243։
5. Ձեռ. Երևանի թանգ., № 85։
6. Ձեռ. էջմ., № 226/195։ Տե՛ս մեր «ԳՐՉ. ԱՐ. Գ., ՔԱՐՏԷԶ ՀԱՅ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ», § 103։
7. Ձեռ. էջմ., № 4086։
8. Ձեռ. էջմ., № 835 ն. գ.։
9. Ձեռ. եմ.ի, № 2612/57։
10. «ՍԻՍՈՒԱՆ», 516։
11. Ձեռ. եմ.ի, № 2563։

Այս հանգամանքները պարզելուց հետո՝ պիտի փորձենք ճշտել և խմբանկարի թագապահ անձը, որ կանգնել է թագավորի հետևը, երկու ձեռքով արքայական թագը բռնած։ Թագադիր տիտղոսով և Կոստանդին անունով երկու հոգի հայտնի են մեզ այդ ժամանակներում. մեկը Կոստանդին Լամբրոնացին՝ Հեթումի թագադիրն է, որ քանիցս ապստամբեց Հեթում Ա.ի դեմ[12] և վերջապես սպանվեցավ 1250-ին։ Իսկ երկրորդն է Հեթում Ա.ի դուստր Ռիթայի ամուսինը, որ Սարվանդիքարի տերն էր[13]։ Նորա հայրն էր Ճոֆրի, Կոստանդին Պայլի եղբոր (!) Սմբատի որդին («ՍԻՍՈՒԱՆ», եր. 209), իսկ մայրը Կիր Աննա, նաև Կեռան կոչված, որ Կոստանդին Լամբրոնացու և Ստեփանեի աղջիկն էր։ Կիր Աննան ստացել է 1265 թվին Նրուաղեմի № 1956 ավետարանը, գրված և նկարազարդված Թորոս Ռոսլինի կողմից Հռոմկլայում, որի ուսուցիչն է «չքնաղագեղ գրիչ Կիւրակոսն» Զոնի մեջ Աննայի հետ հիշված է.

«Դու զԿոստանդեա մեծ իշխանի
Արժանացեալ թագադրագի
Հայրազատաւք իւր պանծալի
Ընդալ ի լոյս անեղանելի»։

Ավելի պայծառ տեղեկություն կա հիշատակարանի մեջ. «Պարոն Կոստանդին... արժանապատուելի թագադիր և փեսայ Հեթմոյ ս(ուր)բ արքային... Տիկինն իւր Ռիթայ, դուստր ս(ուր)բ արքային[14], Կոստանդին թագադրի հարազատներն են Սմբատ և Ավշին[15]։

Կոստանդինի և Ստեփանեի որդին Ավշին մարաջախտ, պապը Հեթում (Հեղի) ՉԻԳ=1274 թվին ստացել է շքեղ նկարազարդված մի ավետարան Սսում, առաջ սեփականություն Տրդատ եպիսկոպոս Պայլանի կամ Կեսարիո վանքի և այժմ Նյու-Յորքում, շատ կարևոր հիշատակարանով Հեթմյանց թագավորական տան և Լամբրոնացիների համար։ Լևոն Գ.ի կինը Կեռան թագուհին այս Ավշին մարաջախտի եղբոր Հեթումի աղջիկն է։ Այս Ավշին մարաջախտի որդիքն են տիշխանն իշխանաց զզուարթաբարոյն և գեղանձնայն Կոստանդինն և զպատանին Հեթում և զհամեստ դուստրն Թեֆանաւ, իսկ կինն է Տիկին Ակաց։ Ավշին մարաջախտի քույրերն են Կեռան (Կիր Աննան է) և Շահանդուխտ. Կեռանի որդիքն են զթագադիրն Հայոց Կոստանդին» և եղբայրները Ավշին և Սմբատ։ Իսկ մյուս քրոջ՝ Շահանդուխտի որդին է Լևոն. սորա հոր անունը չէ հիշված։ Այս Ավշին մարաջախտի փեսան էր «քաջասիրտ Ճոֆրի տ(է)ր ա(ստուա)ծաշէն դղեկին Սարվանդայ (քարի)», որ հայրն էր Կոստանդին թագադրի։

Նույն Ավշինի «անդ.կնոջն» (կնքահայր) էր «մեծ իշխանն Զատկանց»։

Այսպիսով այս և 1265 թվի Կիր Աննայի հիշատակարանները միանգամայն լրացնում են իրար, պարզելով Կոստանդին թագադրի անձն ու ծագումը։

Եվ ավելին.

Բայց սույն ձեռագրի մի երկրորդ հիշատակարան նոր լույս է բերում Ստեփանոս Վահկացու անձի և գործի մասին։ Այդ հիշատակարանը, շատ գեղեցիկ մանր բոլորգրով, բայց ժամանակակից նախընթացի, ինչպես բովանդակությունն էլ ցույց է տալիս.

«Նաև զարի երջանիկ ք(ա)հ(անայն) Գրիգոր, որդի Կոստանդեա(յ) իշխանի, որ էր ի տան ղպխոյին իշխեցող ի վերայ մեծի և փոքու և որպէս հայր տածող և խնամող ամենեցուն, որ զայս յիշատակ շարայարեաց ի ձեռն մեծ վարդ(ապետին) և եպ(իսկոպոսին) Յակոբա(յ) քեռոյն իւրոյ ուր և սնեալն էր և վարժէր դիմաստից ա(ստուա)ծային և զՍտեփ. Վահկա[16], որ զսա... (մի տող ջնջված) յիշատակի արժանի արարէք»։

Ուրեմն այս նշանավոր ձեռագրի գրիչն ու նկարիչը մեր Ստեփանոս Վահկացին է։ Նկարչության մասին քիչ հետո։

Կոստանդին թագադրի համաձայնությամբ «Հոհնանց» անապատում գրված է մի ավետարան ՉԻԷ=1278 թվականին և ածաղկած գեղեցիկ երանգօքս և արվեստով Ստեփանոս միայնակեցի համար Պաւղոս գրչի ձեռքով։

Վերջին մի շատ փառավոր հիշատակ ունենք նորա կողմից, որ էջմ.ի № 365/2629 ավետարանն է, ամենաշքեղ կերպով նկարազարդված, խորանների և զարդարանքների կախարդիչ գեղեցկությամբ և ավետարանիչների կեղարվեստական գարձր ձևակերպությամբ, տարագախտարար առանց ժամանակի, գրչի և նկարչի տեղեկության։ Միայն հետևյալ ձոնն ունենք, որից հաստատ երևում է, թե ստացողը՝ մեր այս թագադիր Կոստանդինն է.

12. ԳԱՆՁԱԿԵՑԻ, Վենետիկ, 1865, 157։ Ալիշան, «ՍԻՍՈՒԱՆ», եր. 558-4։

13. Սամվել Անեցու շար., եր. 211։

14. Նրանց ամուսնության մասին տե՛ս Ալիշան, «ՍԻՍՈՒԱՆ», եր. 209։

15։ Ձեռ. ԷՄ.ի, № 1956։

16. Վերջին կ-ը կիսով չափ միայն մնացած, բայց Տրդատ եպիսկոպոս Պայլան լրիվ է կարդացել. ՀԱ. 1898, «դպստ.—սեպտ.», եր. 247։ Այսպես միշտ «Վահկա» է գրում այս գրիչը հիշատակարանների մեջ։

Շնորհնա մեզ տ(է)ր ընդ
Երկայն աւուրս զԿոստ
անդին թագաւիր Հայոց կի
լիկեցւոց նահանգիս
եւ տէր Սարուանդի քար։

ծնողաց նորին որ ի յերկնի,
նա եւ որդոցն իւր ցանկալի
նախ Կոստանդնա մեծ իշխանի
այլ եւ Հեթմոյ պատանեկի
եւ ամենայն նոցին տոհմի։

Գրված պետք է լինի ոչ առաջ քան 1271 թվականը, երբ օծվեցավ Լևոն Գ., և հավանորեն ոչ շատ ուշ այդ թվականից։ Տարաբախտաբար ձեռքի տակ լուսանկարներ չունենք, բացի մի զույգ խորաններից, որ Թորոս Ռոսլինի ոճն է հիշեցնում։

Դ.

Հիշեցինք, որ Ավշին մարաջախտի ավետարանը գրված և նկարազարդված է Ստեփանոս Վահկացու կողմից 1274 թվին։ Այստեղ տալիս ենք նախ Զոնը յուր զարդարանքներով, ոսկի դաշտի վերա, կարմիր տողերի մեջ, կապույտ և սպիտակ դծերով եղերված։

Ճբ. Որ ի հաւրէ լուսոյ ծագեալ
եւ ի կուսեն մարմնով ծնեալ
զաւետարանս լուսազարդեալ
մարդկան կենաց կտակ շնորհեալ
որում Աւշինն տենչացեալ
որ մարաջախտ Հայոց պատվեալ
զայս աւետեաց մատեան ստացեալ
եւ Ա(ստուծո)յ ընձայ տուեալ։
7ա. Սայ յիշատակ բարեաց լիցի
Աւշին սորին բստացողի
եւ Կոստանդնա եւ Ստեփանի

Ոչ միայն Զոնը յուր բնագրով տարբեր է Հռոմկլայի և Թորոս Ռոսլինի յուրացրած ձևերից, այլև խորանների զարդարանքները. ձողի կամ տախտակի վերա կանգնած սիրամարգները, ճակատի կենդանիներն ու թռչունները, և քառանկյունու միջի բուսական զարդարանքներն ու միագույն և երկու գլխով միացած թռչուններից կազմված պարիկները։ Այդպիսի ձևակերպությունը պարիկների՝ անծանոթ չէ ԺԳ. դարի կիլիկյան մանրանկարչության։ Զոնը նկարված է և ոչ գրված, և գեղեցիկ է։

Նույնը կարող ենք ասել և խորանների եղանակության մասին, 1բ.—2ա., ընդհանուրը համաչափ և գեղեցիկ, 4բ., խոյակները կծկված նրբերու է, մարդկային դեմքերը, մարմինները և շարժումները կանոնավոր և շնորհալի։ 4բ.ի աջակողմի թռչունի երկար վիզը և փոքր գլուխը հումոր է և ոչ իրական։

Այս համառոտ ցուցումներով, կարծում ենք, պարզված է Լևոն Գ.ի ժամագրքի գրիչ և նկարիչ Ստեփան Վահկացու անձն ու գործը։

(Արտատպված «ՀԱՍԿ» նյութական տարեգրքից, Ռ. տարի, 1949—50 թ.)։